ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ «ԲՈԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը։

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան։

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Արձանագրությունն ստորագրման համար բացվել է 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում՝ 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար՝ Կոնվենցիայով երաշխավորված՝ կյանքի իրավունքի պաշտպանության ամրապնդման և բոլոր հանգամանքներում մահապատիժը վերացնելու ուղղությամբ վերջնական քայլերի ձեռնարկման նպատակով։

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ին։

Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությունն ստորագրել է 2006 թվականի մայիսի 19-ին։

2. Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկանքի՝ 2007 թվականի հունվարի 22-ի դրությամբ Արձանագրությունն ստորագրել են 44 և վավերացրել 37 պետություններ։ Արձանագրությունը չեն ստորագրել ԵԽ անդամ երկու պետություններ (Ադրբեջանը և Ռուսաստանի Դաշնությունը)։ Հայաստանի Հանրապետությունից զատ՝ քննության առարկա Արձանագրությունը չեն վավերացրել Եվրախորհրդի անդամ ևս 5 պետություններ (Իսպանիան, Իտալիան, Լատվիան, Լեհաստանը և Ֆրանսիան)։

3. Արձանագրությունն ստորագրելիս՝ ԵԽ անդամ պետությունները հաշվի են առել այն հանգամանքը, որ Կոնվենցիայի՝ 1983թ. ապրիլի 28-ին Ստրասբուրգում ստորագրված 6-րդ արձանագրությունը, որը վերաբերում է

մահապատժի վերացմանը, չի բացառում մահապատիժը պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի վտանգի պայմաններում կատարված արարքների դեպքերում։

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 2002 թվականի մարտի 20-ին, իսկ Կոնվենցիայի՝ 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրասբուրգում ստորագրված՝ մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2003թ. սեպտեմբերի 9-ին։

4. Արձանագրությունն ստորագրելիս կամ դրանով պարտավորված լինելու մասին համաձայնությունն արտահայտելիս 5 պետություններ համապատասխան հայտարարություններ են արել (Մեծ Բրիտանիա, Դանիա, Նիդեռլանդներ, Վրաստան և Մոլդովա)։

Հատկանշական են Վրաստանի և Մոլդովայի հայտարարություններն առ այն, որ. «Վրաստանը հայտարարում է, որ մինչև Աբխազիայի և Ցխինվալիի շրջանի նկատմամբ Վրաստանի ամբողջական իրավազորության վերականգնումը, այն չի կարող պատասխանատվություն կրել այդ տարածքներում թիվ 13 Արձանագրության դրույթների խախտման համար», և որ. «Մոլդովան հայտարարում է, որ մինչև Մոլդովայի Հանրապետության տարածքային ամբողջականության լիակատար վերականգնումը, թիվ 13 Արձանագրության դրույթները կիրառվելու են միայն Մոլդովայի Հանրապետության իշխանությունների կողմից արդյունավետ վերահսկվող տարածքների նկատմամբ»։

5. «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վերացնել մահապատիժը և երաշխավորել, որպեսզի ոչ ոք չդատապարտվի կամ ենթարկվի նման պատժի,

- բացառել Արձանագրության դրույթների նկատմամբ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառումը («Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում»),

- Արձանագրության դրույթների վերաբերյալ չանել Կոնվենցիայի 57-րդ հոդվածով նախատեսված որևէ վերապահում,

- Արձանագրության 1-4-րդ հոդվածների դրույթներն ընդունել որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ։

Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխլրացնող գործոն՝ ՀՀ Սահմանադրության 15 հոդվածի ամբողջական իրացման համար։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17 ապրիլի 2007 թվականի
ՍԴՈ-694